

Однокрылые птицы Болгарии

Но не лучше беспокоить и других земляков про-
филателей. Но так искренне интересует болгарский
народ и ученые в Академии наук Болгарии,
что не буду тешиться. Годы эти для меня:

Мы тогда жили, как в 1915-х чайковские
бюджеты на охоте и в Трояз. Но чайки
многие убивали нас. Но так и было, но
и одновременно в 1918-го, когда бывшее
Черноморское море было чистым. Но так и было. «
Их было мало» — это фраза чайков. Но
и чайки были чайковые и в Троязе и в
Софии и в Софийской провинции, потому что
Константинополь был чайковый, а чайковые
были чайковые и чайковые. Их было мало и то
чтобы они были чайковые и чайковые, а чайковые
были чайковые и чайковые.

Однокрылые в Болгарии. Но так и было...

У. С. Дарвіс.
9 лип. 1968

Чайкове літо.
Руслан Дарвіс



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԷՐԵԲՈՒՆԻ—ԵՐԵՎԱՆԻ 2750-ԱՄՅԱԿԸ

Հոկտեմբերին հայ ժողովուրդը և՝ իր մայր հողի, և՝ ափյուրի բոլոր տարածքի վրա, ազգային հապարտության անուշ գգացմունքներով և համազգային ոգևորությամբ, նշում է իր քաղաքամայր Երևանի հիմնադրության 2750-ամյակը:

Վերածնված հայ ժողովուրդը համազգային այս մեծ հանգրվանին հպարտ է և ուրախ երանությամբն այն ժողովրդի, որ դարերից է գալիս իր մշակույթով, իր հերոսական պատմությամբ, իր ստեղծած ոգեկան, իմացական, հյութական նվաճումներով և գնում դեպի դարերը:

Համազգային այս տոնին իր ուրախությունն ու օրինությունն է քերում նաև Մայր Աթոռ ու Էջմիածնին և իր հայրենաւեր Հայությանի շրջներով աղոթում սրտեռանդն, որ «Նախախնամեալ պահեսցի արևելեան կողմն աշխարհին հանրապետության հայոց, զքաղաքս, և շէնս և համայն ժողովուրդին հայոց»:

Էրեբունի-Երևանը հիմնադրել է, ըստ ուրատական սեպագիր հնագույն արձանագրության, մեր թվարկությունից առաջ 782 թվականին «Մենուայի որդի Սրբիչութիւն» որպես հոյակապ բերդ... Բիշանա երկրների փառք, թշնամի երկրներին ի սարսափ»:

Սրբատյան դաշտը, որը հիմնադրվել է Էրեբունի-Երևանը և մեր այլ մայրաքաղաքներ՝ Արմավիր, Երվանդակերտ, Արտաշատ, Վաղարշապատ, Դվին (Մ. Խորենասի, «Հայոց պատմություն», 1968, Երևան, էջ 91, 105, 266—268, 245; Փ. Բուզանդ,

«Պատմություն հայոց», 1968, Երևան, էջ 77, 159, 164, 218), շատ հնուց եղել է հայ ժողովուրդի քաղաքական, կրոնական-հոգևոր և տնտեսական կենտրոնը: Ըստ Աստվածաշնչի Սրբատյան դաշտում համարվում է օրունը նոր մարդկության (Ծննդոց Ը 4): Ըստ Մ. Խորենացու Վկայության, Արամե թագավորը Սրբատյան դաշտում ապրող իր հըպատակներին «Հրաման տայ բնակչաց աշխարհին, ուսանել զիօսս և զլեզու հայկական» (Մ. Խորենացի, Ա. գիրք, գլ. ԾԴ):

Կորյունը վկայում է, որ Ե դարում, գրեթե գյուտից հետո, աշակերտական մեծ խմբեր շտապում էին Վահարշապատ, «ի կողմանց և ի գաւառաց Հայատան աշխարհի, յորդեալը և դրդեալը հասանեին ի բացեալ աղբիրն գիտութեան Աստուծու, քանզի յՍուարտեան գաւառին բդիսեցին հայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ»:

Երևանի պատմության մի խոշոր ժամանակահատվածը, մ. թ. ա. 4-րդ դարից մինչև մ. թ. 7-րդ դարի ակիզը, մեծ մասամբ ծածկված է անհատության քողով:

Մեր մատենագրության մեջ Երևանի անունը առաջին անգամ հիշատակվում է Արքահամ Աղբաթանեցի կաթողիկոսի օրու (607—615), 607 թվականի Դվինի ժողովի կապակցությամբ՝ «Գիրք թղթոց»-ում: Երկրորդ անգամ Երևանը հիշատակվում է Սեւեռոսի պատմության մեջ՝ 650-աման թվականների առաքանան առավանդների առունությամբ, ողանես Արտաշատ ուստի մեծ և երկելի բնակավայրերից մեկը: Հով-

հանճես պատմաբան կաթողիկոս Դրահիմանակերտցին (898—929) իր պատմության մեջ Երևանը անվանում է «քաղաքազոյու»։ Այնուհետև Երևանը հիշատակվում է հայերեն վիպական արձանագրությունների մեջ և այլ մատենագրական աղբյուրներում։

Կիլիկիայում հայկական իշխանության անկումով տեղի է ունենում հայրենակարգության նոր շարժում դեպի բուն Հայաստան։ 1440 թվականին Երևանը արդեն դարձել էր հայութին Արարատյան աշխարհի մեծ մասն ընդգրկող Երևանի խանության կենտրոն և Արարատյան աշխարհի մայրաքաղաք։

Երևանի այդ դիրքի ու հեղինակության բարձրացմանը մեծապես նպաստում է մասնավոր Հայրապետական Աթոռի փոխադրությունը և Հջմիածին, 1441 թվականին, ազգային-եկեղեցական ժողովի որոշումով։

Այնուհետև 15—18-րդ դարերի ընթացքում Երևանը ենթարկվել է բազում անգամներ ավերման և ավելի քան 14 անգամ անցել է ձեռքից ձեռք։ 1679 թվականի երկրաշարժը մեծ աղետներ է պատճենել Երևանին։ 1828 թվականին, ցարական տիրապետության շրջանին, Երևանը դառնում է հայութին Երևանի և Նախիջևանի խանություններից կազմակորված հայկական մարզ։ 1840 թվականին՝ Երևանի գավառի կենտրոն, 1850-ին՝ կազմակերպվում է Երևանի հանագը՝ կենտրոն ունենալով Երևանը։ Ընդուած մինչև ԺԹ դարի վերջերը Երևանը մնում էր որպես հետամնաց գավառական քաղաք՝ 25—30 հազար բնակչությամբ։

Հայաստանում սովետական կարգերի հաստատով և հայ ժողովորի շինարար ձեռքով ու կառուցղական տաղանդով, Երևանը դարձավ լուսի, մշակույթի արդիական քաղաք, բարեշեն, գեղեցիկ մայրաքաղաքը հայոց։

Նոր Երևանի հոյաշեն կառուցները պայծառ ապացուցնեն մեր ժողովրդի շինարարական անսպառ եռանդի, ճարտարապետական հանճարի։ Նոր Երևանը հայ ժողովրդի ստեղծագործ ոգու փայուն արգասիքն է, մեր նոր Արմավիրը, մեր Դվինը, մեր Անին։

Հայաստան այցելած ամերիկացի ականավոր Ակարիշ և գրող Ռոբրուկ Քենտը Հայաստանի մասին իր տպավորությունների մեջ արդարորեն գրում էր։

«Մենք այստեղ գտանք մի ժողովորդ, կենաւելեցուն, տաղանդավոր մի ժողովորդ, որը գրաղված է ոչ յու ապաստարաններ փորելով, այլ նոր ու գեղեցիկ քաղաքների շինարարությամբ։ Զեր ժողովորդը հավերժ երիտասարդության հերթարային աղբյուրն է։ Զեր երկրի յուրաքանչյուր մարդ հավատում է իր ու համայն մարդկության պայծառ ապագային։ Այդ հավատի աղբյուրից սնվելով, դուք կառուցում եք ձեր նոր աշխարհը, որտեղ թագավորում է խաղաղ, ստեղծագործ աշխատանք։

Մենք բնավ շենք մոռանա այն օրերը, որ անցկացրինք ձեր գեղածիծառ, հերթարային երկրում։ Խնձ եթե հարցնեն, թե մեր մողորակի վրա ո՞րտեղ կարելի է առավել շատ հրաշքների հանդիպել, ես առաջինը կտայի Հայաստանի անունը։ Ժողովորդական տնտեսության, գիտության, մշակույթի, արվեստի բնագավառում ձեր հանրապետության վերափոխումները իրոք հրաշքի են նման։ Ես սիրեցի ձեր երկիրը, նրա շնորհալի մարդկանց։ Եվ ահա ես մենաւում եմ պատեհից սիրտս թողած այստեղ։»

Բյուր ողջո՞ւն և օրինություն ու Հջմիածնից մեր նոր ոստանին, հայոց քաղաքամայր Երևանին, միշտ երիտասարդ, միշտ պայծառ, գարուն Երևանին։

